ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2024 թվականի N 2037-Ն

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԱՅԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՆՎԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ և 18-րդ կետերի, «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների մասին» օրենքի 4-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրատվության կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրաբերության կարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) պետական, բյուջետային հիմնարկների տնօրինության տակ գտնվող հանրակացարանային բնակելի տարածքների նվիրատվության և հանրակացարանային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սահմանել, որ պետական գույքի, այդ թվում՝ բնակելի տարածքների նվիրատվության, բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման և նվիրաբերության նպատակն է՝

1) նպաստել երկրի հանրային կյանքի առաջնահերթ զարգացման կարիք ունեցող ոլորտների կայուն առաջընթացին.

2) բարելավել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի (ընտանիքի, այլ սոցիալական խմբի) կենսապայմանները.

3) բարձրացնել պետական գույքի հանրային օգտագործման արդյունավետության մակարդակը.

4) որոշակի պայմանի (պայմանների) սահմանումով նպաստել հասարակական կյանքի առանձին ոլորտների՝ առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի, սոցիալական այլ ոլորտների և բարեգործության, ինչպես նաև համայնքային զարգացմանը.

5) համապատասխան ոլորտային մարմինների կողմից հավանության արժանացած գործարար ծրագրի հիման վրա նվիրաբերության կատարման միջոցով ապահովել տնտեսության առանձին ոլորտների զարգացումը.

6) հասարակական կյանքի զարգացման գործընթացին մասնակից դարձնել քաղաքացիների խմբերին և առանձին քաղաքացիների:

3. Պետական գույքի նվիրատվության, նվիրաբերության սուբյեկտներ կարող են հանդիսանալ իրավաբանական անձինք, համայնքները, օտարերկրյա պետությունները, քաղաքացիները, քաղաքացիների խմբերը և օտարերկրյա անձինք:

4. Պետական գույքի նվիրատվությունը, նվիրաբերությունը և սեփականաշնորհումը կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով:

5. Սահմանել, որ պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրատվության, նվիրաբերության, ինչպես նաև բնակելի տարածքների նվիրատվության և սեփականաշնորհման գործընթացն իրականացնում և Հայաստանի Հանրապետության անունից Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների հիման վրա գործարքները կնքում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե)։ Նվիրատվության պայմանագրերը կնքվում են համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված դրույթների։ Գույքային իրավունքների պետական գրանցման և պայմանագրերի նոտարական վավերացման ծախսերն իրականացվելու են նվիրառուների կողմից։

6. Սահմանել, որ համայնքային սեփականություն հանդիսացող գույքը (այդ թվում՝ հողամասը) սպորտի, կրթության, գիտության, մշակույթի կամ առողջապահության ոլորտներում ծրագրերի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետությանը նվիրելու դեպքում նվերն ընդունելու գործառույթն իրականացնում է կոմիտեն՝ կոմիտեի նախագահի հրամանի հիման վրա։ Ընդ որում, հրամանը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝

1) նվիրվող գույքի անվանումը, հասցեն.

2) շարժական գույքի դեպքում՝ անվանումը, գույքագրման համարը, նույնականացման համարը՝ առկայության դեպքում. թողարկման (շահագործման հանձնելու) տարեթիվը տրանսպորտային միջոցի դեպքում նաև՝ մակնիշը և համարանիշը.

3) հաշվեկշռային արժեքը կամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը.

4) համայնքի անվանումը, որի կողմից նվիրվում է գույքը.

5) նվիրատվության նպատակը.

6) հանձնման-ընդունման աշխատանքների կատարման ժամկետը.

7) հաշվառման և գրանցման ծախսերը հոգացող մարմնի անվանումը։

7. Սահմանել, որ պետական կառավարման համակարգի մարմինների կողմից իրենց ենթակայությամբ կամ տվյալ համակարգում գործող կազմակերպությունների վերազինման նպատակով սարքավորումների, կենցաղային տեխնիկայի և կահույքի

տրամադրումն իրականացվում է ոլորտային լիազոր մարմնի ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման հիման վրա, ընդ որում, գործարքները կնքում է լիազոր մարմինը:

8. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի «Պետական մարմիններին ամրացված՝ բնակելի տարածքների նվիրատվության կարգը հաստատելու մասին» N 305-Ն որոշումը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց՝ պետական մարմինների տնօրինության տակ գտնվող հանրակացարանային բնակելի տարածքների սեփականաշնորհման կարգը հաստատելու մասին» N 404 որոշումը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի «Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրաբերության կարգը հաստատելու մասին» N 1067-Ն որոշումը:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

20.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ